

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մարգահովիտ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մարգահովիտ	Ավագանու արտահերթ նիստ	24.12.2020թ.	14:00	Մարգահովիտի համայնքապետարանի նիստերի դահլիճում (գ. Մարգահովիտ, 2 փողոց 23)

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մարգահովիտ համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 24-ի
նիստի օրակարգը:

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 24-ի
արտահերթ նիստի.

1. Մարգահովիտ համայնքում 2021 թվականի համար տեղական
տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի վարձատրության
չափը, աշխատակազմի աշխատակիցների և համայնքային
ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու
մասին:
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական
օգնություն տրամադրելու, ուսանողներին ուսման վարձի,
հարազատին կորցնելու դեպքում, նորածին երեխաներին 2021թ.
համար տրամադրվող դրամական օգնության չափը
հաստատելու մասին:
4. Մարգահովիտ համայնքի համայնքապետարանի և ենթակայության
հիմնարկների 2020 թվականի գույքագրման արդյունքները
հաստատելու մասին:
5. Համայնքի անասնազրկաքանակի մեկ պայմանական կովի
արոտավայրի 2021 թվականի վարձավճարի չափը հաստատելու
մասին:
6. Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի
անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկի և
գնացուցակի մասին.
7. Մարգահովիտ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու
մասին:
8. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական
օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ
ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

Մարզահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարզահովիտ գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի և հավելված 2-ի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ,**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ,**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ,**

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **յոթանասուն հազար դրամ,**

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար դրամ.**

շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ,**

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,

վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **տաս հազար դրամ**.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հիսուն հազար դրամ**. (կիրառվել է 0.75 գործակից)

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ**.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ**.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ**,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար մեկ դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար հինգ հարյուր դրամ**. (կիրառվել է 0.3 գործակից)

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար մեկ դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ** (կիրառվել է 0.3 գործակից)

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար հինգ հարյուր դրամ**. (կիրառվել է 0.3 գործակից)

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երկու հարյուր յոթանասուն դրամ**՝ մեկ քառակուսի մետրի համար. (կիրառվել է 0.75 գործակից)

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **երեսուն հազար դրամ**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **վաթսուն հազար դրամ**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ**,

դ. խաղատների համար՝ **վեց հարյուր հազար դրամ**,

ե. շահումով խաղերի համար՝ **չորս հարյուր հազար դրամ**,

զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր քսան հազար դրամ**.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար դրամ**,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար դրամ**,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասը հազար դրամ**,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար դրամ**,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսանհինգ հազար դրամ**,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քառասուն հազար դրամ**.
- բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
 - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար դրամ**,
 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**,
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար դրամ**,
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար դրամ**,
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասներկու հազար դրամ**
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսան հազար դրամ**.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ**,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ**.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու

թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ**.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար դրամ**.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ**,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ**,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ**

Հավելված 2

Մարգահովիտ համայնքի ավագանու

2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 54-Ն որոշման

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **զրո** դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ**,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **զրո** դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար** դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար** դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար** դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա. կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական **յոթանասուն** դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **մեկ հազար** դրամ,

գ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **հինգ** դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետր համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ **մեկ հազար** դրամ,

9) Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **վաթսուն** դրամ,

բ. հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **երեսուն** դրամ,

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **հինգ** դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար **երեք** դրամ:

10) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով **երեք հազար** դրամ.

11) համայնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատությունների (երաժշտական- **քսանութ հազար** դրամ, նկարչական- **քսան հազար** դրամ և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **երկու հարյուր** դրամ փոխհատուցման վճար:

13) Հանդիսությունների սրահում կազմակերպվող միջոցառումների վարձավճար սահմանել. **հարսանիք (1 օրվա համար) երեսուն հազար/** դրամ,

միջոցառումներ (ծնունդ, կնունք, բանակի) **քսան հազար** դրամ, սգո արարողություն (1 օրվա համար) **տաս հազար** դրամ:

14) Մարգահովիտի “Շիրմատուն” ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող գերեզմանափորների ծառայության վարձաչափ սահմանել համայնքի բնակչի համար **հինգ հազար** դրամ, Այլ բնակավայրերի բնակչի համար **տաս հազար** դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‘Տեղական ինքնակառավարման մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետով, ‘Իրավական ակտերի մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Մարգահովիտ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Մարգահովիտ համայնքի ենթակա հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2, 3-ի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավար	1	303.000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	198.000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար	1	198.000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2	168.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	163.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ	3	163.000
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ-գանձապահ	1	158.000
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	158.000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Վարորդ	1	90.000
Մեխանիզատոր	1	90.000
Հավաքարար	1	93.000
Հանդապահ	1	93.000
Աղբատար ավտոմեքենայի բանվոր	1	93.000
ԸՆԴԱՄԵՆԸ		

2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ա որոշման

ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
Աշխատակիցների թվաքանակը՝ 26:

Թիվ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱ- ՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱ- ՅԻՆ ԴՐՈՒՅՔԱ- ԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԱՄՍԱԿԱ Ն ԱՇԽԱՏԱ- ՎԱՐՁԻ ՖՈՆԴԸ (ՀՀ դրամ)	ԱՄՍԱԿԱ Ն ԺԱՄԱԿԱ ՐՁԸ (ՀՀ դրամ)
1	Տնօրեն	1	110.000	110.000	
2	Հաշվապահ	1	105.000	105.000	
3	Կադրերի տեսուչ	0.5	95.000	47.500	
4	Թանգարանի աշխատակից	1	90.000	90.000	
5	Գրադարանի վարիչ	1	95.000	95.000	
6	Ուսումնական մասի ղեկավար	0.5	98.000	49.000	
7	Դաշնամուրի դասատու	1	90.000		170.0
8	Դաշնամուրի դասատու	1	93.000		206.0
9	Դաշնամուրի դասատու	1	93.000		74.9
10	Նկարչության դասատու	1	93.000		122.1
11	Դռնապան	1	90.000	90.000	
12	Հավաքարար (ԿՄՄՀ)	1	90.000	90.0	
13	Մանկապարտեզի վարիչ	1	105.000	105.0	
14	Դաստիարակ	2	105.000	210.0	
15	Դաստիարակի օգնական	2	90.000	180.0	
16	Երաժշտ. դաստիարակ	0.5	95.000	47.5	
17	Բուժքույր	0.5	95.000	47.5	
18	Տնտեսվար	0.5	98.000	49.0	
19	Խոհարար	1	90.000	90.0	
20	Հավաքարար (ՆՈՒՀ)	0.5	95.000	47.5	
21	Օժանդակ բանվոր	1	90.000	90.0	
22	Ավագ մարզիչ	1	95.000	95.0	
23	Մարզիչ	1	90.000	90.0	
24	Ֆուտբոլի մարզադաշտի պատասխանատու	0.5	95.000	47.5	
25	Հավաքարար (մարզադպրոց)	0.5	95.000	47.5	
	ԸՆԴԱՄԵՆԸ	22.5(26)	2294.0	1776.0	573.0

*ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐՄԱՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ*

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7:

<i>Թիվ</i>	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱ- ՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ հազար դրամ)	ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱ- ՎԱՐՁԻ ՖՈՆԴԸ (ՀՀ հազար դրամ)
1	Տնօրեն	1	100.0	100.0
2	Հաշվապահ	1	98.0	98.0
3	Աշխղեկ	1	90.0	90.0
4	Բանվոր	2	90.0	180.0
5	Պահակ	1	90.0	90.0
6	Վարորդ	1	110.0	110.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	7	578.0	668.0

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ,
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ,
ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ,
ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ 2021Թ. ՀԱՄԱՐ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և հիմք ընդունելով համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Անապահով ընտանիքներին սոց. նպատակների հաշվից տրամադրվող գումարի չափը հաստատել 10.000-50.000 (տաս հազարից հիսուն հազար) դրամ՝ ելնելով տվյալ ընտանիքի սոցիալական պայմաններից:
2. Համայնքի անապահով ընտանիքների ուսանողներին սոց. նպատակների հաշվից տրամադրվող ուսման վարձի չափը հաստատել 50.000-70.000 (հիսուն հազարից յոթանասուն հազար) դրամ՝ ելնելով տվյալ ընտանիքի սոցիալական պայմաններից:
3. Հարազատին կորցնելու կապակցությամբ սոց. նպատակների հաշվից տրամադրվող գումարի չափը հաստատել 50.000-70.000 (հիսուն հազարից յոթանասուն հազար) դրամ՝ ելնելով տվյալ ընտանիքի սոցիալական պայմաններից:
4. Համայնքում ծննդաբերությունը խրախուսելու նպատակով յուրաքանչյուր նորածին երեխային միանվագ տրամադրել 10.000 (տաս հազար) դրամ:

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի դրույթներով՝

Մարզահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Մարզահովիտ համայնքապետարանի և նրա ենթակայության հիմնարկների 2020թ. գույքագրման արդյունքները:
2. Համայնքապետարանում և ենթակա հիմնարկներում առկա օգտագործման ոչ պիտանի գույքը, ըստ գույքագրման հանձնաժողովի կողմից կազմված ակտերի, հանել հիմնարկների հաշվեկշիռներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՄԵԿ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿՈՎԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՏԻՄ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 18 կետը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ի նկատի ունենալով բնակչության սոցիալական պայմանները.

Մարզահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մեկ պայմանական կովի արոտավայրի 2021 թվականի վարձաչափը սահմանել 600(վեց հարյուր) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺԻ
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ
ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ՑԱՆԿԻ ԵՎ ԳՆԱՅՈՒՑԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով.

Մարզահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և 2021թ. գնացուցակը համաձայն հավելված 1-ի:

Հավելված 1
Մարզահովիտ համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ
ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՑԱՆԿ ՈՒ
ԳՆԱՅՈՒՑԱԿ

Անասնաբուժական ծառայությունների անվանումը		Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	500-1000
2	Ծննդօգնություն	1000-2000
	1. թեթև միջամտություն	5000-20000
	2. ծանր միջամտություն	

3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (Բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 100-200 Խոշոր կենդանի 200-500
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	200-1000
5	Ախտահանություն	1 քառ. մետր 200-300
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100-200
7	Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)	1 քառ. մետր 200
8	Արհեստական սերմնավորում	5000-7200
9	Կենդանու հերծում	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 3000
10	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելությունը 1000-2000
11	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 2000
12	Կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2018թ. հուլիս ամիսը)	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 2000

ՆԱԽԱԳԻԾ 53-Ն

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Մարգահովիտ համայնքի 2021 թվականի բյուջեն.
2. "ՀՀ Բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 33 հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին 2021 թվականին անհրաժեշտության դեպքում, սույն որոշման 1-ին կետով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10 տոկոսի սահմաններում վերաբաշխել դրանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆՀԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Մարզահովիտ համայնքի ավագանին ո ղ ո ղ ու մ է՝

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի,
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Մարզահովիտ համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբեր 18-ի N 54-Ա որոշման նախագծի

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՅՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Աննա Աղվանի Մատինյան – երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
Ընդամենը – 30.000 /երեսուն հազար/ դրամ: